ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԸ ԽՍՀՄ-Ի ԽԱՂԱՂ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԵՆԱՐԱՆՆ Է

«ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ»Ի ՆՈՐՄԱՆԵՐԸ

Библиотека
Института
Востоковедения
Академии Наук
СССР

Թարգմ. Գ. Արայան

623.5
Ч-86

ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ԵՐԵՎԱՆ 1935

Պետհրատի տպարան — Երևան

Գլ. № 126 Պատվեր № 150 տիրաժ 2000

С 35-И
С 835
623.5
Ч-86



Կ. ՅԵ. ՎՈՐՈՇԻԼՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПОСТРОЕНИЯ
Академии Наук
СССР

12 AUG 2013
13.455
04 AUG 2010
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՄՆՎ.
60045-66

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՐԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Սկզբնական–հրաձգային պատրաստության հիմնական խնդիրն է՝ հրաձգին կանոնավոր ձիգ կատարելու և հրաձգության տեխնիկայի հիմնական տարրերին (ելեմենտներին) տիրապետելու ունակություններ պատվաստել:

Սկզբնական սպորտական–հրաձգային պատրաստությունը հրաձգի հետագա վողջ պատրաստության հիմք է ծառայում, ուստի այս պատրաստությունը պետք է անցկացվի մեծագույն խնամքով և անպայմանորեն հաշվի առնելով յուրաքանչյուր հրաձգի բոլոր անհատական առանձնահատկությունները:

Սկզբնական ուսուցման բոլոր դժվարությունները անց են կացվում՝ յուրաքանչյուր հրաձգին անհատական մոտեցման կարգով:

Փամփուշտները մեծագույն չափով տնտեսելու նպատակով, նույնպես և հրաձգային տեխնիկայի յուրաքանչյուր տարրի մանրամասն մշակման համար, անհրաժեշտ է յերկար ժամանակ նվիրել առանց փամփուշտի մարզանքին, դրա համար ոգտագործելով հրաձգությունից ազատ մնացած ժամերը:

Յուրաքանչյուր հրահանգիչ ամենալավ

հրաձիգներից իր համար ոգնական է ընտրում, վորն ապահովում է՝ հերթի սպասող հրաձիգների հետ մարզանքներն ու նախապատրաստական վարժություններն անցկացնելը:

Թե հրահանգիչը և թե նրա ոգնականը անց են կացնում յուրաքանչյուր հրաձգի հետ առանձին բոլոր հրաձգություններն ու մարզանքները, ուշադրությամբ ուղղելով նրա բոլոր թերությունները: Հրաձգությունները կամ մարզանքները մեկ հրահանգչի կողմից մի քանի հրաձիգների հետ միաժամանակ անցկացնելը վոչ մի դեպքում չի թույլատրվում:

Նախքան պարապմունքներն սկսելը, բոլոր հրաձիգները պետք է ծանոթացած լինեն տիրում պահպանվող ներքին կարգ ու կանոնների ու կարգապահության հետ: Բոլոր պարապմունքների ընթացքում պահանջել ամենախիստ կարգապահության պահպանում, ինչպես կրակի գծի վրա, այնպես էլ սպասող հրաձիգների մեջ:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԾՐԱԳԻՐԸ

1-ին վարժություն.— Ծանոթացում ձիգ կատարելու տեխնիկայի հետ:

Հրահանգիչը, հավաքելով սովորողների խմբակը, ցույց է տալիս թե ինչպես է հագցվում փոկը, ինչպես են ընդունում պառկած դրություն, նշանառություն կատարում և

հրահանն իջեցնում: Անց է կացնում ցուցադրական հրաձգություն: Ցույց է տալիս գընդակի ծակողական ուժը զանազան առարկաների վրա—փայտ, աղյուս, յերկաթ և այլն:

2-րդ վարժություն.— Ձիգ կատարելու նվազների ուսումնասիրություն:

Հրահանգիչը կամ նրա ոգնականը սորուցում է անհատորեն յուրաքանչյուր սովորողին, թե վորքան է նա ճիշտ յուրացրել հրահանգչի ցուցադրածը: Սովորողները մարզվում են առանց փամփուշտի ձիգ կատարելու դործում:

Վորպես ժանդակ գործիքներ ոգտագործվում են հետևյալ անոթները նշանառության հաստոցը, խարոցը, ցուցադրական հատիկը, որիոսկոպը, ցուցիչը:

Առանց փամփուշտի մարզանքը կրկնվում է հրաձգության յուրաքանչյուր վարժությունից առաջ, և յերբ հրահանգիչը հաստատ համոզվում է, վոր սովորողը վերջնականապես յուրացրել է այն ամենը, ինչ վոր նրանից պահանջվում է, միայն այն ժամանակ է թույլատրվում նրան հրաձգություն կատարելու:

3-րդ վարժություն.— Հրաձգություն՝ կուտակության համար:

Հեռակայությունը—25 մ., փամփուշտի քանակը—3, դրությունը—պառկած: Ժամանակը չի սահմանափակված, թիրախը—լիտեր

«Ա», առաջադրությունը— 7 սմ. տրամագծի շրջանից վոչ մի գնդակ դուրս չթողնել:

Յեթե առաջին գնդակը թիրախին չի դիպչում, կամ անկանոն նվագներ են հայտնաբերվում, նույնպես և յեթե սովորողը ավյալ վարժությունը չի կատարում, ապա հրաձիգը վերադարձվում է № 2 վարժությունը կատարելու:

4-րդ վարժություն.— Զիդ կատարելու ժամանակ հրացանի մեխանիզմների աշխատանքի ուսումնասիրությունը:

Պարապմունքի ընթացքում պետք է անցնել՝

1) Մեխանիզմների աշխատանքը՝ փակաղակը բանալու և փակելու, նույնպես և հրահանն իջեցնելու ժամանակ:

2) Ընդհանուր տեղեկություններ փոքրակալիբը հրացանի նյութական մասի վերաբերյալ:

3) Զիդի եյությունը, փամփուշտի կառուցվածքը, գնդակի շարժումը փողանցքի մեջ:

5-րդ վարժություն.— Հրաձգություն՝ դիպուկության համար:

Հրաձգության պայմանները նույնն են, ինչ վոր № 3 վարժության ժամանակ, բայց խնդիրն է՝ վոչ մի գնդակ «4» շրջանից դուրս չթողնել:

Վարժությունը կատարելուց առաջ պետք

է առանց հրացան արձակելու մարզանք կատարել, վորի ժամանակ խնամքով ստուգել, թե ինչպես է կատարում հրաձիգը ձիգ կատարելու բոլոր կանոնները:

6-րդ վարժություն.— Ոդի մեջ գնդակի թռիչքի ուսումնասիրությունը:

Պարապմունքի ընթացքում պետք է անցնել. 1) գնդակի շարժումը ոդի մեջ, 2) գնդակների ցրումը և դրա պատճառները, 3) դիպման միջին կետը գտնելը:

7-րդ վարժություն.— Հրաձգություն՝ դիպուկության համար:

Հրաձգության պայմանները նույնն են, ինչ վոր № 3 վարժության ժամանակ, բայց փամփուշտների քանակն է՝ 3 փորձնական և 3 քննական: Գնահատականն է՝ թիրախի խնձորից (սև շրջանից) գնդակ դուրս չթողնել:

3-ՐԴ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հեռակայությունը—25 մետր, փամփուշտները—5 քննական, դրությունը—պառկած, ժամանակը—անսահմանափակ, թիրախը— լիտեր «Ա», գնահատականը՝ 25 աչկո-գերազանց, 23 աչկո—լավ. բոլոր գնդակներն անպայման սև խնձորի մեջ են գտնվում:

Քննական վարժությունը կատարած հրաձիգը Պաչը-Ավիաքիմի դասակարգման 3-րդ կատեգորիայի հրաձգի կոչում է ստանում:

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ «ՀՐԱՁԻԳՆԵՐԻ» ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1-ին աստիճանի «Վորոշիլովյան հրաձիգների» պատրաստության ինդիքն է՝ այնպիսի հրաձիգ տալ, վորը վերջնականապես յուրացրել է փոքրակալիբր հրացանով, թե հանգիստ և թե արագաձիգ հրաձգության տեխնիկան:

Հրաձգի հետագա պատրաստությունը, այն է 2-րդ աստիճանի «Վորոշիլովյան հրաձգի» նշանակի նորմաներից քննություն տալը կատարվում է արդեն մարտական հրացաններով, այստեղից անհրաժեշտ է դառնում հրաձգության վողջ տեխնիկայի լիակատար յուրացումը, վորը բացատրում է ուսուցման սկզբնական տարիների մշակման կրկնությունը հետագայում:

Բոլոր վարժությունները, ինչպես և 3-րդ կատեգորիայի հրաձգի պատրաստման ժամանակ, անցնում են խիստ հետևողականությամբ և անպայմանորեն հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական բոլոր առանձնահատկությունները: Վոչ մի դեպքում չի կարելի թույլատրել 3-5 և ավելի սովորողների հրաձգությունը մեկ հրահանգչի հսկողության տակ: Պարտադիր է հրահանգչի ոգնական ունենալ, վորն ընտրվում է նորմաներից արդեն քննություն տված և ամենից լավ յուրացրած հրաձիգներից:

Յուրաքանչյուր վարժություն կատարելուց առաջ պետք է տեղի ունենա մարդանքն առանց փամփշտի: Առանց փամփշտի մարզանքները պետք է անցնել նույնպիսի ուշադրությամբ, ինչպես և հրաձգությունը, այլապես կորչում է մարզանքների վողջ իմաստը:

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն նվիրել նշանոցով ոգտվել կարողանալու ուսուցմանը, թույլ տալով յուրաքանչյուր սովորողին ինքնուրույն կերպով, բայց անպայման հրահանգչի հսկողության տակ, անհրաժեշտ ուղղումներ մտցնել, ինչպես նշանոցի և հատիկի տեղաշարժման միջոցով, այնպես էլ նշանառության կետը դեպի մի կողմը դուրս բերելու միջոցով:

Բոլոր պարապմունքները պետք է անցկացնել սոցմրցակցության մեթոդներով, թե խմբակների միջև և թե առանձին սովորողների միջև:

Պետք է պարբերաբար սոցմրցակցություն սահմանել նաև մյուս խմբակների հետ:

Վողջ ծրագիրն անցկացնելը պետք է կառուցված լինի՝ փամփուշտների տնտեսման համար ամենաուժեղ պայքար մղելու նշանաբանի տակ, տնտեսած փամփուշտներն ոգտագործելով՝ սոցմրցակցություններ, կոնկուրսներ և այլ սպորտական մրցակցություններ անցկացնելու համար:

ՀԱՄԱՌՈՏ ԾՐԱԳԻՐ

1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ «ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳՆԵՐԻ» ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ: ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտների քանակը—3, ժամանակը չի սահմանափակված, դրությունը—պառկած (փոկը կիրառելով), թիրախը—սպիտակ շրջան, որը հավասար է «Հնդյակի» շրջագծին, թիրախները—լիտեր «Բ»:

Առաջադրությունը—վոչ մի գնդակ սպիտակ շրջանից դուրս չթողնել:

1-ին աստիճանի «Վորոշիլովյան հրաձգի» նորմաներից քննություն տալու պատրաստության համար պարապմունքներին մասնակցելու թույլատրվում են միայն այն հրաձիգները, որոնք կատարել են ընտրողական վարժությունը: Այդ վարժությունն անցկացնելու ժամանակ հրահանգիչն ստուգում է յուրաքանչյուր հրաձգի պառկելու, նշանառության, հրահանն իջեցնելու և այլոց կանոնավորությունը:

ԱՌԱՋԻՆ ԽՆԴԻՐ

1-ին ա. վարժություն— Ընտրողական վարժության ժամանակ նկատած թերությունների ուղղումը:

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտները—3, դրությունը—պառկած (փոկը կիրառելով), ժամանակը չի սահմանափակված, թիրախը—լիտեր «Բ»:

Առաջադրությունը—դուրս չգալ սև խնձորից:

Այդ վարժության ժամանակ անհրաժեշտ է հասնել հրաձգության տեխնիկայի հիմնական տարրերի վերջնական յուրացմանը:

Այն ընկերներին, որոնք չեն կատարել վարժությունը, փոխադրել առանց փամփուշտների մարզանքին և հետագայում վարժությունը նորից կրկնել:

Զրույց 7,62 միլիմետրանոց հրացանի նյութական մասի վերաբերյալ, հրացանի հավաքումն ու քանդումը, մասերի անուններն ու նշանակումը:

1-ին բ. վարժություն.— Նշանոցի հետ կատարվելիք աշխատանքի ստուգումը:

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտները—3+3 (յերկու սերիայով): Դրությունը—պառկած, փոկը կիրառելով, ժամանակը չի սահմանափակված, թիրախը—լիտեր «Բ»:

Վարժությունը կատարելու ժամանակ հասնել այնպիսի դրության, որ սովորողները պարզ հասկանան նշանոցի հետ կատարվող աշխատանքը և տալ գրի առնելու ուղղումների մասին հիմնական տվյալները:

Դիպման միջին կետի հաշվումը սովորողներն անց են կացնում ինքնուրույն կերպով.

Զրույց ոդի մեջ գնդակի շարժման մասին։ Սովորողներին պետք է պարզ պատկերացում տալ այն հիմնական արտաքին պատճառների մասին, որոնք ներգործում են գնդակի վրա, ցրման պատճառների, հիմնական անկյունների մասին։

1-ին գ. վարժություն.— Նշանոցի հետ կատարվելիք աշխատանքի յուրացման ստուգում և ստուգողական հրաձգություն քննական հրաձգությունից առաջ։

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտները—3+5 (յերկու սերիայով)։ Դրությունը—պառկած (փոկը կիրառելով), ժամանակը չի սահմանափակված, թիրախը—լիտեր «Բ»։ Ուսաջադրությունը կատարել 2-րդ սերիայով (5 փամփուշտ, առնվազն 38 աչկո)։

40 և ավելի աչկո տված հրաձիգներն ազատվում են քննական վարժությունից քննություն տալուց։

1-ին նորմայի քննական վարժությունը։

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտները—5 (քննական), ժամանակը չի սահմանափակվում, թիրախը—լիտեր «Բ»։

Դրությունը—պառկած (փոկը կիրառելով)։ Գնահատականը—բաց նշանոցով—40 աչկո, տարաղետով (դիոպտրով)— 42 աչկո։

ՅԵՐԿՐՈՐԴ ԽՆԴԻՐ

2 ա. վարժություն.— Մարզանք առանց փամփուշտի ձիգ կատարելու սահմանափակ ժամանակամիջոցում։

Վարժությունն անցնելու ժամանակ հասնել՝ պառկած հրաձգության համար արագ պատրաստվելու, արագ վերալցնելու և սահմանափակ ժամանակամիջոցում հրաձգություն կատարելու նվաղների յուրացմանը։

Մարզանքի ժամանակ սովորել առանձին տարրերը (կրակի պատրաստվել, վերալցում, հրաձգություն)— բաժնակի, աստիճանաբար այդ նվաղները միացնելով, մի ամբողջություն կազմելով։

Վարժությունը կրկնել յուրաքանչյուր հրաձգությունից առաջ։

2 բ. վարժություն.— Ստուգում արագաձիգ հրաձգության տեխնիկայի յուրացման։

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտները—3, դրությունը— պառկած, կանգնած դրությունից՝ հրացանը կրակի պատրաստ առնելով (փոկը կիրառելով)։ Թիրախը—լիտեր «Բ»։ Գնահատականը—առնվազն 20 աչկո տալ։

Կատարելու կարգը։ «Կրակ» հրամանից առաջ հրաձիգը կանգնած է, հրացանը վոտքի մոտ է։ «Կրակ» հրամանով պառկում է, հագցնում է փոկը և կրակ է բացում, 3 փամփուշտ արձակելով։

Զրույց՝ ոդի մեջ գնդակի շարժումը, հե-

տաղծի բարձրացումը, հիմնական անկյունները:

2 գ. վարժություն.— Կրակ վարելը սահմանափակ ժամանակամիջոցում.

Հեռակայությունը—50 մետր, փամփուշտները—3, դրությունը—պառկած՝ կանգնած դրությունից (փոկը կիրառելով): Ժամանակը—35 վայրկյան, հաշվելով նաև կրակի պատրաստվելը, թիրախը—լիտեր «Բ», ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ—առնվազն 22 աչկո տալ:

Այս վարժության ժամանակ հասնել այն դրությանը, որ հրաձիգը վերջնականապես մշակի կրակի արագ պատրաստվելը, վերացումը և սահմանափակ ժամանակամիջոցում կատարվելիք հրաձգությունը, բոլոր նվազները իրար հետ կապակցված կատարելով:

Զրույց. մարտական և փոքրակալիբր հրացանների մասերի համագործակցությունը՝ հրացանը լցնելու, ձիգ կատարելու և հրացանը պարպելու ժամանակ:

2. դ. վարժություն.— Ստուգողական վարժություն քննական վարժությունը կատարելուց հետո:

Հեռակայությունը— 50 մետր, փամփուշտները— 5, ժամանակը՝ ՏՈՉ № 7 հրացանի համար— 1 րոպե, ՏՈՉ № 8 հրացանի համար— 1 րոպե 10 վայրկյան, հաշվելով նաև կրակի պատրաստվելը:

Դրությունը, թիրախը և կատարման կարգը նույնն են, ինչ վոր 2 բ. վարժության ժամանակ:

Խնդիրն է— առնվազն 35 աչկո տալ: 37 և ավելի աչկո տված հրաձիգներն ազատվում են քննական վարժությունը կատարելուց:

II. ՆՈՐՄԱՅԻ ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ

Հեռակայությունը— 50 մետր, փամփուշտները— 5: Դրությունը— պառկած, կանգնած դրությունից (փոկը կիրառելով): Թիրախը—լիտեր «Բ»: Ժամանակը՝ ՏՈՉ № 7 հրացանի համար— 1 րոպե, ՏՈՉ №8 հրացանի համար—1 րոպե 10 վայրկյան:

Կատարման կարգը բաց նշանոցով— 35 աչկո, տարբերատով (դիոպտրով)— 37 աչկո:

60045-66

ՄՇՏԻՏՈՒՏԱ
СССР

ՏԵՐՐՈՐԴ ԽՆԴԻՐ

ՀՐԱՁԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՎՈՐ ԹԻՐԱԽԻ ՎՐԱ

III խնդրի վարժությունները, բացի թիրախից, 2-րդ խնդրից վոչնչով չեն տարբերվում, ուստի հիմնականը կլինի հրաձգի աչքի ծանոթացումը նոր թիրախին:

3 ա. վարժություն.— Մարզանք առանց հրացանի:

Մի շարք արագ «ձիգեր» կատարել 6 անգամ փոքրացրած № 9 նշանի վրա:

Վարժությունն անց և կացվում 2-րդ խնդրի քննական վարժության պայմաններում,

ՄԵՏ ԿԱՆ ԿՐ. ԴԱՐՄԻ
ГСС Ենթամասնություն
ZUUՌ-Արմ ССР

բայց վեց անգամ փոքրացրած № 9 նշանի վրա, վոր կախված է հրաձգից 50 մետր հեռակայության վրա:

3 բ. վարժություն.— Մարտական հրաձգություն՝ քննական վարժությունից քննություն տալուց առաջ:

Հեռակայությունը— 50 մետր, փամփուշտները—5, թիրախը—նշան № 9 (կրծքաչափ, շրջաններով) 6 անգամ փոքրացրած:

Դրությունը— պառկած՝ կանգնած դրությունից: Ժամանակը՝ ՏՈՉ № 7 հրացանի համար— 1 րոպե, ՏՈՉ № 8 հրացանի համար—1 րոպե 10 վայրկյան:

Կատարման կարգը «կրակ» հրամանից առաջ հրաձիգը կանգնած է, հրացանը վոտքի մոտ: «Կրակ» հրամանով պառկում է, հագցնում է փոկը և հրաձգություն կատարում:

Գնահատականը— առնվազն 35 աչկո տալ: 40 և ավելի աչկո տված հրաձիգներն ազատվում են քննական վարժությունը կատարելուց:

ՔՆՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ.

Կատարվում է 3 վարժության պայմանների համեմատ, բայց գնահատականը՝ բայց նշանոցով պետք է տալ առնվազը 37 աչկո, տարադետով (դեսպորով)40 աչկո:

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

III կատեգորիայի հրաձգի պարտականությունը՝

Նախապատրաստական վարժություն	9	փամփուշտ
Քննական վարժություն	5	»
	14	փամփուշտ

I աստիճանի «ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԳԻ» պարտականությունը՝

1-ին խնդիր. Նախապատրաստակ. վարժ.	20	փամփուշտ
Քննական վարժություն	5	»
	25	փամփուշտ
2-րդ խնդիր. Նախապատ. վարժություն	11	փամփուշտ
Քննական վարժություն	5	»
	16	փամփուշտ
3-րդ խնդիր. Նախապատ. վարժություն	5	փամփուշտ
Քննական վարժություն	5	»
	10	փամփուշտ

Ընդամենը հրաձգության և I աստիճանի «Վորոշիլովյան հրաձգի» քննություն տալու համար 65 փամփուշտ

ԻՆՉՊԵՍ ՏԻՐ ԿԱՌՈՒՑԵԼ

Հրաձգության համար տեղի—տիրի կառուցման հարցը, հրաձգային խմբակի աշխատանքի կազմակերպման գործում, ամենակարևոր հարցերից մեկն է հանդիսանում:

Այն տեղը, վորտեղ հրաձգություն և կատարվում ամեն մի զենքից, պետք է սարքա-

վորված լինի այն հաշվով, վոր միանգամայն վերացված լինի տիրից գնդակների դուրս թռչելու հնարավորությունը:

Տիրերի հիմնական տեսակները հետևյալներն են.

1. Փակ տիր, տիր, վոր սարքավորված է ամեն կողմից փակ շենքում (ներքնատուն, սարայ, հատկապես կահավորված շենք):

2. Կիսաբաց տիր, վոր կողքի պատեր ունի և վերևի գնդակախափանիչներ:

3. Բաց տիր, (վոր պատեր և առաստաղ չունի, այլ ունի կողքի և վերևի գնդակախափանիչներ:

Բոլոր տիրերին հիմնականում հետևյալ պահանջներն են առաջադրվում.

1. Տիրն ամեն կողմից պետք է ցանկապատած լինի այն հաշվով, վոր նրա ներսը չկարողանան մտնել վոչ մարդիկ, վոչ անասունները:

2. Տիրն այնպես պիտի կառուցված լինի, վոր ուղիղ և պատահական ձիգերի գնդակներից վոչ մեկը կամ վոստոստոյուն (ռիկոշետ) տվող գնդակները չկարողանան դուրս թռչել տիրի սահմաններից:

Տիրի համար կարելի յե հարմարեցնել գոյություն ունեցող շենքերը–ներքնահարկը, սարայը: Ոգտագործելով այդպիսի շենքերը, անհրաժեշտ է հաշվի առնել, վոր պատերն ու առաստաղը կառուցված լինեն այնպիսի նյութերից, վորոնց հաստությունը վերացնում է գնդակների ծակել անցնելու հնարավորությունը:

Փոքրակալիբր գնդակի ծակողական ընդունակությունը ընորոշվում է հետևյալ տվյալներով.

Մանրախիճ, ավազ	մինչև	10 սմ.
Խիճ	»	8 »
Տախտակներ, գերաններ . . .	»	8 »
Ֆաներալի թերթեր	»	4 »
Սղյուս	»	2 »
Բետոն	»	2 »
Յերկաթ	»	3 »

Գնդակների կողմից պատերը կամ առաստաղը ծակել անցնելու հնարավորությունը վերացնելու համար անհրաժեշտ է, վոր դրանք առնվազն յերկու անգամ ավելի հաստ լինեն այն նվազագույն չափից (մինիմումից), վոր ծակում անցնում է գնդակը: Պետք է հաշվի առնել, վոր ծակողական ներգործությունը տվյալ դեպքում մատնանշված է մեկ գնդակի համար, իսկ միևնույն տեղին մի քանի գնդակի դիպչելը հնարավորություն է տալիս գնդակների ավելի խորը թափանցելուն:

Ամենահասարակ տիրը բաղկացած է. 1) ծածկած կրակի դծից, վոր պաշտպանում է հրաձիգներին անձրևից, ձյունից, 2) հրաձգային պատից, վորն ոժտված է վերևի և կողքերի գնդակախափանիչներով, վորոնք ապահո-

վում են տիրից գնդակների դուրս չթռչելը և 3) գնդակընդունիչից (թիրախային պատ), վոր ոժտված է ծածկով:

Կրակի գծի կառուցվածքը հատուկ ցուցումներ չի պահանջում, բացի նրա չափերից: Կրակի գծի վրա յուրաքանչյուր հրաձգի համար պետք է ապահովված լինի առնվազն 1,5 մետր մակերես: Իսկ յեթե հրաձիգներն ավելի կուտակված պառկած լինեն, նրանք կխանգարեն մեկը մյուսին և չեն կարողանալ կանոնավոր դրություն ընդունել և, բացի այդ դժվարանում է հրահանգչի աշխատանքը: Այսպիսով, յեթե մենք տիրը հաշվում ենք 5 հրաձգի համար, ապա կրակի գծի լայնությունը պետք է լինի առնվազն 7,5—8 մետր: Կրակի գծի վրա պետք է արկղներ լինեն կրակած պարկուճները հավաքելու համար, բուրգեր՝ զենքի համար, փալասներ (փռված-քներ), վորոնց վրա պառկում են հրաձիգները: Կրակի գծի վրա պետք է անպայմանորեն կախված լինի տիրում պահպանվող ներքին կարգապահության կանոնները:

Հրաձգային սրահը (հենց տիրը), յեթե դա սարքավորված է փակ շենքում, հատուկ հարմարանքներ չի պահանջում:

Յեթե սրահում քարե յելուններ կան (ելեկտրական սարքավորում, խողովակներ և այլն) անհրաժեշտ է այդ բոլորը փայտե այնպիսի վահաններով ծածկել, վորոնք չեն ծակվում գնդակներով՝ ելեկտրոսարքավորումը, խողովակները և այլն փչացնելուց պահպանելու համար:

Յեթե հրաձգային սրահը տանիք չունի, այսինքն տիրը կիսաբաց է, նրա ամբողջ յերկարությամբ վերևի գնդակախափանիչներ են կառուցվում այն հաշվով, վոր կրակի գծի ամենամի կետից յերկինքը չերևա:

Գնդակախափանիչը մի տուփ է, վոր պատրաստվում է փայտից: Տուփի հաստությունն է 0,5—0,8 սմ.: Տուփը լցնում են խիճով, վոր խառնում են ավազի և չոր հողի հետ: Գնդակախափանիչները դրվում են կրակի գծից 5, 10, 18, 29, 39 մետր հեռավորության վրա (յեթե 50 մետրանոց տիր է կառուցվում):

Մոտավորապես նույն սկզբունքով ել կառուցվում են նաև կողքի ուղղաձիգ գնդակախափանիչները, վորոնք թույլ չեն տալիս, վոր գնդակները դուրս թռչեն դեպի աջ ու ձախ կողմերը: Կողքի գնդակախափանիչների հաստությունը կազմում է 20—25 սանտիմետրը, լայնությունը նույնն է ինչ վոր վերևի գնդակախափանիչները:

Թիրախային պատը (գնդակընդունիչը) պետք է կառուցված լինի առնվազն յեռակի հաստությամբ՝ գնդակի ամենամեծ ծակողական ընդունակության հետ համեմատած:

Տիրի բնական պատի առջևում ազյուսի կամ հողի պատ է կառուցվում բնական պատի

ամբողջ չափերով։ Դրանց առջևում նույնպես ավազով լի արկղ է դրվում, վորի չափերը նույնպես պիտի համապատասխանեն բնական պատի չափերին։ Ավազով լի արկղի վրա կախում են թիրախները։ Թիրախային պատը վերևից պետք է ծածկ ունենա, վորը պահպանում է թիրախներն անձրևից և միևնույն ժամանակ ծառայում է վորպես վերևի վերջին դնդակախափանիչ։ Ծածկը պատրաստվում է նույն յեղանակով, ինչ վոր դնդակախափանիչները։

Տիրի հատակը պետք է հարթ լինի, առանց թմբերի, քարերի և այլ առարկաների, վոր կարող են վոստոստյունների (ռիկոշետների) պատճառ դառնալ։

Տիրերի կառուցման վերոհիշյալ կարգը միշտ ել հնարավոր չե շրջանային կազմակերպության պայմաններում, մանավանդ տիրի առաջին յերկու վարյանտները։ Ուստի յեթե հնարավորություն չկա տիրը սարքավորել այնպես, ինչպես հանձնարարվում է վերևում, կարելի յե տիրը կառուցել, ոգտվելով վայրից· որինակ՝ լավ է տիրը սարքավորել փոսում, հեղեղատում և այլն· այդպիսի տիրի համար տեղ փնտռելիս, պետք է գտնել փոս կամ հեղեղատ, վորոնց լանջերը նույն ուղղություն ունենան, ինչ ուղղությամբ մենք հրաձգություն պիտի կատարենք, և բավականին բարձր լինեն ու ապահովեն դնդակների դուրս չթռչելը· բարձրությունը հիմքից մոտավորապես պետք է 5—6 մետր լինի։ Այդ լանջի մոտ անհրաժեշտ է դնել դնդակընդունիչն իր շքոցիկով—ծածկով, ինչպես այդ հանձնարարված է վերևում տիրերի՝ դրանց առաջին և յերկու վարիանտների համար։ Այդպիսի բնական տիրի կողքի պատեր են հանդիսանում՝ ինքը փոսը կամ հեղեղատի կողերը։ Հարթակը (տիրի հատակը) պետք է հարթած և մաքրած լինի թփերից, քարերից և այլն։ Հրաձգություններն անցկացնելու ժամանակ փոսի վերին յեզրերի վրա պետք է անպայման շղթայապատված դնել, վորի պարտականությունն է՝ վոչ մեկին թույլ չտալ ոչ ձախ կողմերից, վոչ ել թիրախների կողմից, առնվազն 500 մետրի վրա մոտենալու տիրին՝ փոքրակալիբր հրացաններով հրաձգություն կատարելու ժամանակ։

Մարտական հրաձգություններով հրաձգությունը կարելի յե անցկացնել միմիայն հատուկ հրաձգարաններում, վոր կառուցվում են դրա համար սահմանված կանոններով։

Ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ է յեռևի պատը (ավազով արկղը), այսինքն դնդակընդունիչը քանդել և դնդակները զատել, վորովհետև արձիճը դիֆիցիտային նյութ է և անհրաժեշտ է հանձնել այն կրակած պարկուճների հետ միասին։

Այդպիսի կարգը խոշոր չափով կեժանացնի Պաջը–Ավիաքիմի կազմակերպության համար հրաձիգների պատրաստությունը։

ՍՊՈՐՏԱԿԱՆ ՀԵԾԱՆԻՎԱՅԻՆ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱ

(Նորմաներ)

ՄԱ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՀՐԱՁԳԻ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ.

Բնական վարժություն.

Հեռակայությունը— 25 մետր.

Փամփուշտները— 5 հատ, առանց փոքնականների.

Դրությունը— պառկած, ձեռքից, փոկը կիրառելով.

Ժամանակը— անսահմանափակ:

Թիրախը— Լիտեր «Ա».

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ— Առնվազն 23 աչկո, բայց ծակոտինները չպետք է սև չրջանից դուրս գան:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՎՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ

I. Կառուցվող սոցիալիզմի յերկրի պաշտպանությունն ամրապնդելու գործի մեջ՝ Պաջը-Ավիաքիմի անդամների լայն մասսաներին ներգրավելու և հենց դրանով ել Պաջըավիաքիմի առաջ դրված՝ ԲԳԿԲ խսկական ռեզերվը դառնալ— խնդրի կատարմանն ոժանդակելու նպատակով, հրաձգային պատրաստության գործում ընկերության հետ մնալը վերացնելու և հրաձգային սպորտն աշխուժացնելու և զարգացնելու նպատակով, ԽՍՀՄ Պաջըավիաքիմի միության Կենտխորհրդի նախագահությունը հաստատում է «Վորոշիլովյան Հրաձիգ» կրծքանշան, վոր տրվում է հրաձգային պատրաստությանը տիրապետելու համար:

II. «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշան ստանալու իրավունքը ձեռք են բերում Պաջը-Ավիաքիմի բոլոր անդամները, վորոնք ակտիվորեն մասնակցում են ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ու պաշտպանունակության ամրապնդմանը, վորոնք տիրապետել են հրաձգության տեխնիկային և կատարել են այս կանոնադրությամբ նախատեսված նորմաներ.

1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

III. 1 աստիճանի «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշան ստանալու համար անհրաժեշտ է

1. Լինել հարվածային արտադրության մեջ:

2. Լինել Պաջը-Ավիաքիմի ակտիվ անդամ:

3. Լինել Պաշը–Ավիաքիմի III կատեգորիայի կլասիֆիկացիայի հրաձիգ:

4. Տիրապետել փոքրակալիբր հրացաններով և մարտական զենքով հրաձգության տեխնիկային և կատարել հետևյալ յերեք վարժությունները.

1–ին վարժություն. ՏՈԶ փոքրակալիբր հրացանով 50 մետրի վրա: Փամփուշտները— 5 փորձնական, 5 քննական:

Ժամանակը չի սահմանափակվում: Թիրախը — լիտեր «Б» կամ № 9a (հրաձգության կուրսեր— 32 թ.): Դրությունը— պառկած, փոկը կիրառելով:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ— բաց նշանոցով— 40 աշկո և տարադետով (դիոպտրով)— 42 աշկո:

2–րդ վարժություն. ՏՈԶ փոքրակալիբր հրացանով, 50 մետրի վրա: Փամփուշտները— 5 քննական: Թիրախը— լիտեր «Б» կամ №9a (ՀԿ—32):

Դրությունը—պառկած, վոր ընդունվում է կանգնած դրությունից. մինչև «Կրակ» հրամանը հրաձիգը կանգնած է, հրացանը վոտքի մոտ է, «Կրակ» հրամանով— պառկում է և կրակ է բաց անում: Ժամանակը— ՏՈԶ № 1 և 8 հրացանների համար— 1 րոպե 10 վայրկյան, ՏՈԶ №7 և 7ա հրացանների համար— րոպե:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ— բաց նշանոցով— 35 աշկո, տարադետով— 37 աշկո:

3–ՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ— նշանը № 9 կրծքաչափ, չրջաններ ունեցող վահանի վրա:

ԶԵՆՔԸ— մարտական զենք ամեն մի նշանոցով, բացի հեռադիտակային (տելեսկոպիկ) նշանոցից: ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ— 300 մետր:

ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ—3: ԺԱՄԱՆԱԿԸ— անսահմանափակ: ԴԻՐՈՒԹՅՈՒՆԸ— հրաձգության համար— պառկած, փոկը կիրառելով: ԴԻՊՈՒՄՆԵՐ ՅՈՒՅՑ ՏԱԼԸ— բոլոր ձիգերից հետո:

Գնահատականը բաց նշանոցով 16 աշկո, պարադետով— 20 աշկո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե հնարավորություն չկա վարժությունը կատարելու, մարտական հրացանների կամ հրաձգարանի բացակայության պատճառով, մարզային սպորտական— հրաձգային կոմիտեի թույլտվությամբ, վարժությունը կարելի է փոխարինել փոքրակալիբր ՏՈԶ հրացանով կատարած հրաձգությամբ, հեռակայությունը— 50 մետր, թիրախը— № 9 (կրծքաչափ, չրջաններով, վեց անգամ փոքրացրած), դրությունը պառկած, վոր ընդունվում է կանգնած դրությունից 2–րդ վարժության պայմաններով: Ժամանակը— 1 րոպե, ՏՈԶ № 7 և 7 հրացանի համար և 1 րոպե 10 վայրկյան— ՏՈԶ № 8 հրացանի համար:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ— տարադետի համար— 40 աշկո, բաց նշանոցի համար 37 աշկո:

Յուրաքանչյուր վարժության համար թույլատրվում է մի անգամից յերկուսից վոչ ավելի փորձ կատարել, դուրս չգալով պատրաստության համար բաց փամփուշտների նորմայից:

Յուրաքանչյուր վարժություն կարելի յե հանձնել բաժնակի կերպով և յուրաքանչյուր վարժությունից առաջ թույլատրվում է փորձնական ձիգեր կատարել:

5. Լավ իմանալ 7,62 հրացանի և ՏՈՉ փոքրակալիբր հրացանի նյութական մասը, գենքը պահելու, խնամելու և հրաձգության համար նախապատրաստելու կանոնները:

6. Իմանալ հրաձգության տեսության հիմնական կանոնները, այսինքն կարողանալ գնել դիպման միջին կետը, ինքնուրույն կերպով ուղղումներ մտցնել բաց դիոպտրով և բաց նշանացով հրաձգության ժամանակ, իմանալ հրաձգության վրա արտաքին պատճառների (քամի, արև) գործած աղդեցությունը, հասկացողություն ունենալ փողանցքի և ողի մեջ գնդակների շարժման մասին, ցրման որենքի և դրա պատճառների մասին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Հրաձգության վերաբերյալ նորմաների ընդունումը թույլատրվում է միայն այն ժամանակ, յերբ հրաձիգը տեղեկանքներ ունի հարվածայնության, Պաջբավիաքիմում ակտիվ աշխատելու և հրաձգության տեսությունից ու զենքի նյութական մասից քննություն տալու մասին:

2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

(1-ին կատեգորիայի հրաձիգներ)

IV. 2-րդ աստիճանի «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշան ստանալու համար անհարժեշտ է.

1. Լինել 1-ին աստիճանի «Վորոշիլովյան հրաձիգ»:

2. Տիրապետել մարտական հրացանով հրաձգության տեխնիկային և կատարել հետևյալ վարժությունները.

1-ին վարժություն. ԶԵՆՔԸ— մարտական հրացան: ՀԵՌԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ— 300 մետր: ԹԻՐԱԽԸ— լիտեր « » (№ 3): ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ— 3 փորձնական և 5 քննական: ԴՐՈՒԹՅՈՒՆԸ— պառկած ձեռքից: ԺԱՄԱՆԱԿԸ— անսահմանափակ:

Գնահատականը— բաց նշանոցի համար— 40 աշկո, տարադետի համար— 42 աշկո:

2-րդ վարժություն— ԶԵՆՔԸ— մարտական հրացան: Հեռակայությունը— 30 մետր: ԹԻՐԱԽԸ— № 9 (ՀԿ— 32) կրծքաչափ չրջան-

ներով։ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԸ— 5։ ԺԱՄԱՆԱԿԸ— 30 վայրկյան։ Մինչև «Կրակ» հրամանը հրաձիգը պառկած է, կրակի պատրաստվել է, զենքը լցված է, թույլատրվում է նշան բռնել։

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ— բաց նշանոցի համար— 35 աչկո, տարադետի համար 40 աչկո։

3. Կարողանալ հեռավորությունը վորոշել աչքաչափով և ամենահասարակ գործիքների միջոցով 1.500 մետրի սահմաններում։

4. Իմանալ քողարկման, վայրի մարտական ոգտագործման հիմնական կանոնները և կարողանալ գիտողություն կատարել մոտավոր մոտի հեռակայության սահմաններում (մինչև 800 մետր)։

5. Քննություն տալ 1 աստիճանի ՊԱՊ կրծքանշանի նորմաներից։

6. Լավ իմանալ հրաձգային մրցակցությունների ժամանակ դատավորության կանոնները և կարողանալ կրտսեր դատավորի պարտականությունները կատարել։

Յուրաքանչյուր վարժության համար թույլատրվում է կատարել մեկ որում յերկու փորձից վոչ ավելի։ Յուրաքանչյուր վարժությունից կարելի է քննություն տալ առանձին-առանձին։ Հրաձգության նորմաների ընդունումը կատարվում է միայն այն ժամանակ, յերբ քննություն է տրված մնացած նորմաներից։

ԻՆՉՊԵՍ ՀԱՆՁՆԵԼ ՆՈՐՄԱՆԵՐԸ

V. «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշանի համար նորմաներն ընդունելու ղեկավարության հիմնական պատասխանատվությունը դրվում է Պայը-Ավիաքիմի շրջանային խորհուրդների և հրաձգային կոմիտեների վրա։ Շրջանային խորհուրդներին կից ստեղծվում են հանձնաժողովներ հրաձգային կոմիտեի նախագահի նախագահությամբ, ոյդ հանձնաժողովների մեջ ներգրավելով պրոֆկազմակերպությունների, կոմյերիտմիության և հրաձգային ակտիվի ներկայացուցիչներին։

Հանձնաժողովը լիազորների կարգ և նշանակում նորմաներն ընդունելու համար, նորմաներից քննություն տվածների հաշվառում է կատարում և կրծքանշան է տալիս։ Նորմաներից քննություն նստալը տեղի յե ունենում՝ ֆաբրիկ-գործարանային, կոլտնտեսային, խորհտնտեսային և շրջանային տիրերում ու հրաձգարաններում։

Արգելվում է նորմաներն ընդունել այն հրահանգիչներին, վորոնք պատրաստել են հրաձիգներին քննություն տալու համար։

Մարզային, յերկրային, հանրապետական հրաձգային կոմիտեները կենսագործում են շրջանային կոմիտեների աշխատանքի վերաբաշխումը (կոնտրոլը), շրջաններին ոգնություն են ցույց տալիս «Վորոշիլովյան հրա-

ձիգներ» պատրաստելու գործում, հրահանգիչների կադրեր պատրաստելով և շրջիկ դրոշ բոցներ ուղարկելով և այլն, և «Վորոշիլովյան հրաձիգների» գումարային հաշվառում են կատարում:

«Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշանի նորմաներից քննություն տալ ցանկացողներն իրենց կազմակերպություններից քարտ են ստանում, վորի մեջ նորմաներն ընդունող լիազորները քննություն տալու մասին նշումներ են անում կոմպլեքսի յուրաքանչյուր կետի նորմաներից առանձին-առանձին: Քննություն տալը կարող է տեղի ունենալ աստիճանաբար, առանց վորոշ հետևողականություն պահպանելու (բացի մարտական հրացանով հրաձգություն կատարելուց, վորը թույլատրվում է միայն 1-ին աստիճանի կոմպլեքսի մնացած բոլոր նորմաները կատարելուց հետո):

Հրաձգային պատրաստության գործում բավական ունակություններ չունեցողների համար պետք է կազմակերպել խմբակներ, տիրերին և հրաձգարաններին կից կոնսուլտացիաներ և մարզանքներ:

1-ին աստիճանի նորմաներից քննություն տվողների համար պետք է ապահովված լինի վամփուշտների բաց թողնումը կանխիկ վճարով, բայց 75 փոքրակալիբրը և 15 մարտական փամփուշտից վոչ ավելի. 2-րդ աստիճանի նորմաներից քննություն տվողների համար

պետք է ապահովել 11 փոքրակալիբրը և 96 մարտական փամփուշտ:

Փամփուշտները բաց են թողնվում վոչ միանգամից, այլ միայն այն քանակությամբ, վորն անհրաժեշտ է տվյալ նորմայից քննություն տալու և մարզանքի համար՝ հրահանգիչների ղեկավարությամբ կամ խմբակներում:

VI. Այս կանոնադրությամբ սահմանված բոլոր վարժությունները՝ կատարելուց և քննությունները տալուց հետո, հրաձիգների քարտերը ներկայացվում են շրջանային կոմիտեին, վորը հաստատում է քննությունների հետևանքները և «Վորոշիլովյան հրաձիգ» կրծքանշան է տալիս:

Կրծքանշանները համարակալված են, և համարակալումը ընդհանուր է ամբողջ ԽՍՀՄ համար: Նորմաներից քննություն տվողը, բացի կրծքանշանից, վկայական է ստանում կոմպլեքսի նորմաներից քննություն տալու մասին:

Վկայականի մեջ պետք է մատնանշված լինեն կրծքանշանի համարը և քննությունների հետևանքները: Վկայականին պետք է փակցված լինի հրաձգի լուսանկարը:

VII. Ամեն տարի, մարզային, յերկրային և հանրապետական սպորտական-հրաձգային կոմիտեների կողմից սահմանված ժամկետներին կոնտրոլ հրաձգություններ են անցկաց-

վում կրծքանշանի նորմաներից (ըստ աստիճանների)։ Կոնտրոլ հրաձգությունները կատարելու մասին հրաձգային տոմսի մեջ համապատասխան նշում է արվում։ Կոնտրոլ հրաձգությունները չկատարածները զրկվում են կրծքանշանը կրելու իրավունքից։ Կոնտրոլ հրաձգություններն անցկացնելու տևողության ժամկետը պետք է լինի առնվազն յերկու ամիս։

Առաջին անգամ կոնտրոլ հրաձգությունից քննություն չտված հրաձիգները կարող են կրկնել այն։

VIII. Հարվածայինի կոչումից զրկված հրաձիգը զրկվում է կրծքանշանը կրելու իրավունքից մինչև հարվածայինի իրավունքները վերականգնելու մոմենտը։

Հրաձգության տեխնիկային տիրապետելու հետագա կատարելագործման համար հրաձիգների հետաքրքրվածություն ստեղծելու նպատակով սահմանվում է հրաձիգ-վարպետի կոչում, վոր ստանում են այն հրաձիգները, վորոնք հրաձգային արվեստի բարձր նմուշներ են ցույց տվել։

Հրաձիգը վարպետի կոչում է ստանում, ըստ վորում ընութագրվում է այն մասնագիտությունը, վորից նա քննական վարժություն է կատարել։

ա) Վարպետ՝ մարտական հրացանի նկատմամբ։

բ) Վարպետ՝ փոքրակալիբր հրացանի նկատմամբ։

գ) Վարպետ՝ մեծ հեռակայության փոքրակալիբր հրացանի նկատմամբ։

Հրաձիգ-վարպետի կոչում ստանալու համար սահմանվում են հետևյալ քննությունները՝

ա) ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆՈՎ

Քննություն տալը թույլատրվում է միայն հրաձգարանում։

Հեռակայությունը— 300 մետր։ Թիրախը— լիտեր «Б» միջազգային։ Ցուրաքանչյուր դրության համար— 10-ական ըստ ժամանակ։ Թույլատրվում են միայն 1 կատեգորիայի այն հրաձիգները, վորոնք փոքրակալիբրը հրացանով հրաձգության վարպետի կոչում ունեն։

Վարժություններ. 1-ինը— կանգնած, 2-րդը— ծնկից, 3-րդը— նստած, 4-րդը— պառկած։

Գնահատականը. բոլոր վարժությունների աչկոների գումարը պետք է առնվազն 310 լինի. Զենքը— կամայական, ձգանն— (առանց չնելլերի, նշանոցը— կամայական) բացի ոպտիկականից)։

Դիպումների ցույց տալը և գիտողություն կատարելը թույլատրվում է։

Հրաձիգը, յեթե նորմաները չի կատարել, բայց մեկ սեզոնում հաջորդաբար յերեք ան-

վում կրծքանշանի նորմաներից (ըստ աստիճանների)։ Կոնտրոլ հրաձգությունները կատարելու մասին հրաձգային տոմսի մեջ համապատասխան նշում է արվում։ Կոնտրոլ հրաձգությունները չկատարածները զրկվում են կրծքանշանը կրելու իրավունքից։ Կոնտրոլ հրաձգություններն անցկացնելու տևողության ժամկետը պետք է լինի առնվազն յերկու ամիս։

Առաջին անգամ կոնտրոլ հրաձգությունից քննություն չտված հրաձիգները կարող են կրկնել այն։

VIII. Հարվածային կոչումից զրկված հրաձիգը զրկվում է կրծքանշանը կրելու իրավունքից մինչև հարվածային իրավունքները վերականգնելու մոմենտը։

Հրաձգության տեխնիկային տիրապետելու հետագա կատարելագործման համար հրաձիգների հետաքրքրվածություն ստեղծելու նպատակով սահմանվում է հրաձիգ-վարպետի կոչում, վոր ստանում են այն հրաձիգները, վորոնք հրաձգային արվեստի բարձր նմուշներ են ցույց տվել։

Հրաձիգը վարպետի կոչում է ստանում, ըստ վորում բնութագրվում է այն մասնագիտությունը, վորից նա քննական վարժություն է կատարել։

ա) Վարպետ՝ մարտական հրացանի նկատմամբ։

բ) Վարպետ՝ փոքրակալիբր հրացանի նկատմամբ։

գ) Վարպետ՝ մեծ հեռակայության փոքրակալիբր հրացանի նկատմամբ։

Հրաձիգ-վարպետի կոչում ստանալու համար սահմանվում են հետևյալ քննությունները՝

ա) ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆՈՎ

Քննություն տալը թույլատրվում է միայն հրաձգարանում։

Հեռակայությունը— 300 մետր։ Թիրախը— լիտեր «Ճ» միջազգային։ Ցուրաքանչյուր դրության համար— 10-ական րոպե ժամանակ։ Թույլատրվում են միայն 1 կատեգորիայի այն հրաձիգները, վորոնք փոքրակալիբրը հրացանով հրաձգության վարպետի կոչում ունեն։

Վարժություններ. 1-ինը— կանգնած, 2-րդը— ծնկից, 3-րդը— նստած, 4-րդը— պառկած։

Գնահատականը. բոլոր վարժությունների աչկոների գումարը պետք է առնվազն 310 լինի. Զենքը— կամայական, ձգանն— (առանց շնելլերի, նշանոցը— կամայական) բացի ոպտիկականից)։

Դիպումների ցույց տալը և գիտողություն կատարելը թույլատրվում է։

Հրաձիգը, յեթե նորմաները չի կատարել, բայց մեկ սեզոնում հաջորդաբար յերեք ան-

դամ առնվազն 300-ական աչկո յե տվել, վարպետի աստիճան և ստանում։

բ) ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆՈՎ

Հեռակայությունը— 50 մետր։ Թիրախը— լիտեր « Б » կամ № 9։ Յուրաքանչյուր դրության համար— 10-ական փամփուշտ, առանց փորձնական փամփուշտների։ Նշանոցը— կամայական (բացի ոպտիկականից)։ Քննությունտալը թույլատրվում և տիրում և հրաձգարանում։

Թույլատրվում են այն հրաձիգները, վորոնք կատարել են 2-րդ կատեգորիայի, այսինքն «Վ.Հ.» 1-ին աստիճանի քննական վարժությունները։

Վարժություններ. 1-ինը— կանգնած, 2-րդը— ծնկից, 3-րդը— նստած, 4-րդը պառկած։

Գնահատականը. Բոլոր վարժությունների աչկոների գումարն առնվազն 315, նշանոցի սիստեմից անկախ։

գ) Հեռավոր հեռակայության փոքրակալիբր հրացանով հրաձգության հրաձիգ-վարպետի կոչում ստանալու համար թույլատրվում են այն հրաձիգները, վորոնք կատարել են փոքրակալիբր հրացանով 2-րդ կատեգորիայի քննական վարժությունները։

Հրացանն ու նշանոցը կամայական են, բացի ոպտիկական նշանոցից։

1 Վարժություն.

Հեռակայությունը— 100 մետր։ Փամփուշտները— 3 փորձնական և 10 քննական։ Թիրախը— լիտեր « В »։ Ժամանակը— 10 բոպե քննական վարժությունների համար։

2 Վարժություն.

Հեռակայությունը— 200 մետր։ Փամփուշտները— 3 փորձնական և 10 քննական։ Թիրախը— լիտեր « Г »։ Ժամանակը 10 բոպե քննական վարժությունների համար։

Գնահատականը— յերկու վարժությունների աչկոների գումարը— առնվազն 282, դրանցից յերկրորդ վարժության համար— առնվազն 92։

«ՊԱՏԱՆԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ»-ՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

1. Խորհրդային միության հազարավոր պիոներները, կատարելով իրենց նշանաբանը, ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱԳԻ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ՊԱՑՔԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ակտիվորեն տիրապետում են ռազմական աշխատանքի հետաքրքրական և կարևորագույն ձևերից մեկին— հրաձգությանը։

2. Խորհրդային Միության «Պատանի հրաձիգ»— պիոներներից ու դպրոցականներից ուճում են հրաձգության արվեստի հարցերում

գրագետ փոխարինողներ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ապագա լավագույն հրաձիգներ և սնայպերներ:

3. Խորհրդային Միության աշխատավորության յերեխաների մեջ հրաձգության ըստորը խրախուսելու համար ԽՍՀՄ-ի Պաշտ-Ավիաքիմի Կենտխորհուրդը և ԼԿՅԵՄ Կենտկոմի մանկական կոմունիստական կազմակերպության Կենտրոնական բյուրոն սահմանել են «ՊԱՏԱՆԻ ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՀՐԱՁԻԳ» նշանը:

4. Այս կրծքանշանը կրելու պատվավոր իրավունքը տրվում է այն 13–16 տարեկան ուսման հարվածային պիոներին կամ դպրոցականին, վորը քննություն է տալիս հետևյալ ծրագրով՝

ա) ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Տարածությունը— 25 մետր, դրությունը— պառկած, հրացանը ձեռքի վրա,— ոգտագործելով փոկը: Փամփուշտների քանակը— 5, թիրախ լիտեր «Ա», ժամանակն անսահմանափակ: ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ— պետք է բոլոր գնդակները կպցնեն սև խնձորին և տան առնվազն 23 աչկո:

ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Տարածությունը 25 մետր, դրությունը— Հակազազային դիմակը հագած պառկած, հրացանը ձեռքի վրա, ոգտագործելով հրացանի փոկը, փամփուշտների քանակը 3, թիրախ № 12,—10 անգամ փոքրացրած, ժամանակն անսահմանափակ:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝ չպետք է Ֆիգուրայից յերկու գնդակ դուրս հանել:

բ) ԳԻՏԵՆԱԼ ԸՆԿ. ՎՈՐՈՇԻԼՈՎԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

գ) Գիտենալ փոքր տրամաչափ ունեցող «ՏՈԶ» 7 «Ա» և 8–ը հրացանի կազմությունը (նյութական մասը), գործողությունը, պահելու, մաքրելու և հրաձգության համար նախապատրաստելու կանոնները:

դ) Գիտենալ հրաձգության թեորիայի նախնական կանոնները, այսինքն՝ գիտենալ պտնել 3,4 և 5 գնդակի դիպման միջին կետը: Գիտենալ արտաքին պատճառների ազդեցությունը հրաձգության վրա (քամի, արև և այլն):

Հասկացողություն ունենալ գնդակի շարժման մասին հրացանի փողի մեջ և ոդում: Գիտենալ գնդակների ցրման որենքը և նրա պատճառները:

յե) Վորոշել տարածությունը 100 մետր սահմաններում, 15 տոկոսից վոչ ավելի սխալով:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ԱԲԽ Ա.Ս.Հ

«Ազգային գրադարան»
NL0270965

13.455

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

Нормы
Ворошиловского стрелка

Эривань, Типография Армсиргиза